

չափ Տէրութեան քիւրտան և կողմնա-
տեցին թուրքերու խառն թերերը,
Մարաշի թիւրք զինուորներ եւս
իրենք ալ ուղեցին կաշաթեհէն
օգտուելով մզկիթը հրդեհեցին և
հայերուն վրայ ձգեցին յանցան-
քը: Բազմաթիւ ձերբակալութիւն
ներ տեղի ունեցան. բայց կա-
ռավարութիւնը ճշմարտութիւնը
խանայով, բարեկամօրէն վար-
ւեցաւ հրդեհին հեղինակներուն
հետ:

ԲՅՈ ԱՐՄԱՆԵՐԱՆ

ՈՒՍՈՒՅԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ

—*—

Պ. ՀԻՆՏԵՆՆԵՐՆ

(Շար. նախորդ քիւնն)

Ինչ և ինչ անորէն չարաքանդէն
վերջը՝ վարժարանը անկերպարան վի-
ճակ մը առաւ, ամեն կողմէն գանդա-
ներ սկսան անդալ. ապաքը հետզհետեւ
ցրտեցան: Աշակերտներուն մէջ անե-
րեսութեան օգի մը երեսն եկաւ և
աչդ յանգեցնելու համար վաճառանի
հաստ փայտերը գործածուեցան. Պ. Ա.
որ աւագ ուսուցիչ և զաւ. քիչ մնաց
ծնծ պիտի ուտէր մանչերու: Դ. դասա-
րանէն, չէ՛ք յիշիր որ օր մըն ալ նոյն
դասարանի պատուհանէն ահագին քար
մը ինկաւ. մէկուն օտարընէն քով, ո-
րուն սիրոյն չափով դարձած էր և
որուն մասին եղած քննադատութիւնը
առիթմ տուաւ. ձեզ հաղիւ: Հ. մը ստո-
րագրելով հրապարակ ելլելու, Լսեցէք
այս անկարգութիւնները. կը պատա-
նէին այն ժամանակ երբ անօրէն չը-
կար և աւագ ուսուցիչը ձեզի գոր-
ծակից պ. Ա. էր եւ փոխն աւագ ու-
սուցիչն ալ զոք էր պ. Հինտենան պ
Ա. գ-րիչը. անկերպարան վիճակը
տեսնելով չուէնք Ամերիկա առաւ առ-
բին չը բռնորած. դոք ալ քննու-
թիւն երէն յետոյ ձեր կիծկը-յրի՛ք Ինչ
էր պատճառը որ հալածուած երէկ պէս
դոք ձեզ վաճառներէն մէկուն մէջ յի-
տեցիք: Դոք փախած անոր համար ո-
րովհետեւ գործը ծակուեցաւ արդէն:
Ձեր սիրալիք քարը ըստ ձեր թափիք-
փածուեցան տեղ մը թողած էր և
հետզհետեւ կասկածոտ ու հախաճող
ակնարկները անհանգիստ կընէին ձեզ:
Եւ այս ամէնը պատահելէն յետոյնչ
պէս չկասկածիլ որ դոք ալ գաւաղ-

րութիւնը սարքած էր քանդակներով
աշխատեալ զատ մնալու համար:

Դոք պ. Հինտենան այն ժամանակն ք
քանի անգամ կրկնած էր թէ անօրէնը
չատ աղիւ. անձնաւորութիւն մըն է.
թէ ձեր հակառակութիւնը վարժարանի
վարչական սկզբունքին համար է: Ձե՛ք
իշեր ձեր առ խօսքերը, որոնք երէկ-
ուան պէս կը հնչեն մեր ականջին:
Դոք Հինտենան, սիրելի ըլլալու
համար անոնց, որոնց համար հողա-
բարձուի մը կարծիքը յայտնեցին,
խառնակիչ անուանելով. բարոյական
անկումը յանձն կառնէք պարսաւելով
պաշտօնակից մը, որուն մասին այդ
յորտաճները դրուելէն առաջ տարբեր
կարծիք ունէիք. ինչպէս կը խոստո-
վանք ձեր այդ խեղճ ու կրօն գրու-
թեամբ, որը հասկնալու համար առ-
նուագն 4-5 անգամ կարդալու է:

Ձախ եւր ապիկարի մը տպագրու-
թիւնը կը թողուք շիտակէ՛քը ըստ
զգացումներէ բարբոթուած մօր կու-
ղէք քսել մեր վրայ. ձեր յայտնի ճա-
մարտականութեամբ ու փաստաբանա-
կան ձեւերով քանի մը կը կծկուաք
ցոյց տալու համար կարծէք ձեր հրա-
շարի հմտութիւնը, որը ձեր պաշտպան
պանեալներուն բերին ջուրերը կը
վազցնէ միայն:

Կըսէք թէ մենք այսինչ այսինչ պաշ-
տօնակիցները ունեցած ենք և չենք
բողոքած անոնց անկարգութեան հա-
մար: Ձե՛ք անդրադռնաւք ձեր այս
խմտառակութեան, այնպէս մը կըսէք
իր թէ վարժարանին մէջ մեր պաշ-
տօնը ըլլար ասոր անոր կարողութիւնը
չափիլ և ըստ այնմ զանոնք վարժա-
ւան ընդունիլ կամ մերժել: Եթէ այս-
պէս է նոյն տարին դոք ինչո՞ւ չի
բողոքեցիք ուսուցիչներու գէ՛մ, որոնց
համար քանի քանի անգամ յայտնած
էիք մեզ թէ էր ուսուցիչ բռնուիլիք
տեղ չունին և որոնք այժմ Միւս
թեան անդամ են: Ձեր Մարտանի
կարծած ուսուցիչը կը հաւատացնեն
մէ աւելի ազդեցութիւն ունէր իւր
իւր աշակերտներուն վրայ քան այս
սորուն անոր տեղ բռնող ուսուցիչ-
ները: Ինչ կը կարծէք, վարժարանը
քառս մը դարձեր է այսօր չնորհիւ
Միւս թեան ուսուցիչներուն. պիտի
բողոքէի՛ք անոնց գէ՛մ պ. Հինտենան
եթէ անոնց հետ միասին պաշտօն ու-
նենայիք:

Առանձնով ուսուցչական միութեան
վրայ, մեր տեղոյս վարժարանէն հե-
ռանալը, անոր հոգաբարձութեան վը-
րայ ունեցած ազդեցութեան կը վե-
րագէ՛ք: Ով հակառակը կը պիտի եթէ

Միւս թիւնը այս տարի հանդիպեցաւ իր
կողմին անդիտակից, տղայ հոգա-
բարձութեան մը, որ միութեան խո-
տումիւրուն չկրնայով զիմաւայ տնոր
ճանկերուն մէջ ինկ և եւ սուան ու
չիտակը, կեղծ ու տնկեղծ, օգտա-
կարն ու վնասակարը իրարմէ չկրցաւ
զանդաղեցիլ. ինչ հաստատու ու փաստ
կրնաք ցոյց տալ թէ ապագային այ
նոյն փայլ պիտի կրկնուի իւրօր հո-
գաբարձութեան տուննապետը պ. Գա-
նտենան, տեսնելով իրար տնկալի
զիճակը. սուկալիթիւն յոստիար-
դանագած սրտով. ընկճուած յարուց-
ուած ներքին գոռաբու թիւններէ, դա-
տալիք կրկնալ իր հրաժանողանք տա-
լով կրնալ անհնչել: Եւ մենք կը
հաստատուք որ պ. Հոգաբարձուն այժմ
թիւրաւ կը լրջալ անուան սխալ քոյ-
թին աշխատիլ հետեւ. նքններ իր խե-
տքերով տեսնելով և վարժարանին
անցնալը՝ ներկայ աւերակ վիճակին
հետ զազդատելով կը փնտնէ նախորդը
իւր մի քանի անխուսափելի պակասու-
թիւններով հանգեւ: Որոնք կը մը-
նան հիմա իւր բուն ոգաբարձութեան
երկը օժանդակներէն որոնք այս տար-
րալուծման մեծապէս նպաստեցին:
Այս իրողութիւնները լսելով, աքա-
ղալի պէս փնտալալի վզերից վեր-
ցուցէք. թեւեւ թափ տուէք ու
կուկուրիկու ձայնեղէք. հաւերը պէտք
ունին այդ անուշ ձայնին միութեա-
րուելու համար:

Մարգարեան

(Մնացածը յաջորդով)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Դանձակի մէջ ժամհարեանին
տունը ուսմը մը պայթեցաւ. վի-
րաւորուած է տանտէրը որ նաեւ
ձերբակալուեցաւ: Այդ տանը մէջ
գտնուեցան զէնքեր պատրաստե-
լու արհեստանոց. բանի մը հոգի
ալ ձերբակալուած են:

Այս ժամհարեանը պէտք չէ
շփոթել Մոսկուայի և Շուշեցի
մեծահարուստ և բարեխառ ժամ-
հարեաններու հետ, որոնցմէ մին
Դաշնակցութեան զոհը եղած էր
մեզսակցութեամբ վարդոյի:

— Կիրակի օր Սոֆիայի մէջ
տեղի ունեցած է Պուլկար յեղա-
փոխական ուղարկեալ Պորիս Սա-

րտիօվի և Կարմանովի յուզարկա-
ւորութիւնը արտակարգ խուռն
բազմութեամբ: Ելելու հարկերէ
աւելի պատկներ զեւեղուած են,
որոնց մէկ քանին ալ հայ կա-
սակցութիւններու և ընկերու
թիւններու կողմէ:

— Հիւ Հնչուկեան կուսակցու-
թեան օսկան Հնչակի վերջին
թիւին մէջ կը կարդանք հետեւե-
լալ պաշտօնակրան յայտարարու-
թիւնը:

«Հնչ. կուսակցութեան կեդրոն
վարչութիւնը որով ալ յայտնու-
է որ Կ. Պոլսում, Չիքոնիայում,
Թիւրքիայի ուրիշ քաղաքներում
ինչպէս և արտասահմանեան զու-
նայան» Կրկնեալ, Հնչակում
անուանով ուղարկալիքներ անդ-
ները և բունի գրում պահանջող
անձնատրեւ թիւնները կամ լարմ-
բակցութիւնները ոչ մի կապ եւ
յարարութեամբ չունին Հնչակ-
եան կուսակցութեան հետ. հե-
տեւապէս Հնչակեան կուսակցու-
թեան մասնաճիւղերը և զեկա-
վորիչ մարմինները որ և է պա-
տասխանատուութիւն չունին այդ
մասին:

Կեդր. վարչ.


ԾԱՌԱՅՈՒՆ ԳԻՐԴԵՐ

ԹԻՒՄՈՒՆՆ և հատոր (162 էջ) 1 ֆր.
" " " 1433 էջ) 2 ֆր.
ՆՈՐ ԵՐԵՎԱՆԻ կամ ՄԻՄՈՒՆԸ
ՀԱՅԿԱՅԻՆ ԵՐԿԻՐԱԳ անշարժ ապագ-
աւած եւ հախաճ. Գին 1 ֆր.

ՆԷՅԱՆՆ Կը պատկերացնէ Պուլկար-
եան ուսուցչը ու թուրքերէ
կրած տառապանքը անոնց ազատու-
թեան ստալ. Գին 50 ամսիկ:

ՀԱՅՐԵՆԻ ԲԻ ԶՈՅՆԻ Պատկեր
մը ծած ապաստանի իրական կեան-
քէն: Զ. լեւալ գին 1 ֆր.

Այս գ. կըրտաւարու համար գիմալ
ՀԱՅԵՆՆ. «Իր առաւել» ի խմբագ-
րութեան:



ճարները, մէկ խօսքով մեր սուրբ
վայրերը քանդել տուաւ, որպէս զի մեր
ազգին գոյութիւնը բնաճինչ ըլլայ:
Ախ, չը գիտէք, որչափ որ քրեւոր
վայրենի է, յեռնային է ու աւագակա-
լին կեանք մը ունի, սակայն թուր-
քին պէս անբարոյական ու նենգաւոր
չէ:

— Ուրեմն թուրք կատաւարութե-
ան կը լուծեն ձեր զուականներուն վը-
րէժը, չըլլար:

— Թուրք, կատաւարութեան... ախ
հայր սուրբ, արդար է բաժնիդ ար-
դէն ձեզի եւ ինծի պէս ծերունիին.
բուն մնաց թուրքին զէմ կուրիլ ա-
նոնք որ բազմ կնիք ունին, անոնք
որ պողպատէ թիկունք ու կուրծք մը
կը կրէին, անոնք ամենքն ալ ինկալն
փնտցան, անհետացան: Արեւան աշ-
խարհք մը մնաց մեզի իր ւերակնե-
րու մէջ: Բայց ի՞նչ է մեր մարած
կեանքը սա բոլոր վրէժներուն զէմ,
ինչ կարող ենք ընել, աւելի աղէկ է

Աստուած հոգինիս անէր որ միանգամ
ընդ միշտ ազատուէի՛նք:

Աւագակապետը ժպտելով պատաս-
խանեց.

— Տէր Մարտիրոս, ահա ինչպէս
ըսի, Աստուծոյ նրբիւրական տաճարին
մէջ ենք երկուքս ալ կը յայտնեմ թէ
կրօնաւոր մը չեմ ես...:

— Հապա՞, բացազանչնք քահանան:

— Ես յեղափոխական մըն եմ:

— Յեղափոխական...:

— Այո... այսինքն հայրենեաց ու

ազգին զինուորներէն եմ: Եկայ որ
բարի ու հայրենասէր մարդու մը յայտ-
նեմ այն անհրաժեշտ պէտքը զոր հայ-
թայթիւն պարտականութիւնն էս ըս-
տանձնած եմ:

— Ինչ է այդ պէտքը:

— Հաց, ուրիշ ոչինչ:

— Մարդիկներդ չառուո՞ր են:

— Ձէ՛ք փորելի խուճ մըն է. հա-

զիւ 24 հոգիէ կը բաղկանայ:

— Ո՞վ է անոր զխաւորը

— Մեր գլխաւորին անունը ինչ-
ձալատ է:

— Խան-ձալատ:

— Այո:

— Անիկայ այս կողմէն եկած է:

— Ճիշդ է:

— Ախ, բարի Աստուած... երէկ չէ

առջի օրը վաշտ մը ձիաւոր զապթիա-
նիք անցան: Մեր Ռէս Զեան վերջէն
յայտնեց ինծի թէ Խան-ձալատի գէ՛մ
կերթան եղբիւ: Դոք ալ խուճըին
մէջ ինչ պաշտօն ունիք:

— Ինչ պաշտօն կրնամ ունենալ...
կը տրանէք թէ ձերացած եմ, հետեւա-
բար հրացան նետելու չուի ուժ մը
չունիմ... միայն թէ Խան-ձալատին
ծառայութիւն մը ընկու. համար ա-
սանկ ծագեալ վիճակով գնդէ գնդ ման
կուգամ ու պաշար կը ճարեմ: Աս ե-
ղած է ուխտս եւ աս պիտի ըլլայ մին-
չեւ զերեկմանիս ցուրտ հողը:

— Աստուած կարողութիւն տայ ձե-
զի... միմիջեց Տէր Մարտիրոս ու

յուզմունքէն չը կրնայով արցունք-
ները զսպել, սկսաւ արտաբերել:

Ու ստանալովէն Խաղաղագեան իր
անշուք բայց կովիկ տունը, նստեցոյց
կակուղիկ միտէրի մը վրայ եւ ըսաւ.

— Բարեկամ, կը խոստանամ ձեռ-
քս եկած օրութիւնն ընելու: Բայց
ինդիք մը ունիմ... արդեօք կարելի
է:

— Ինչ է հարցոյց Աւագակապետը:

— Կը փանաքիլ անգամ մը այդ Խան
ձալատ կրնամ մեծ մարդը տեսնել
ու այնպէս մեռնիլ Ախ, չատ բաներ
լսած եմ իր վրայոք չատ քաղութիւն
ներ պատմած են ինծի արոր կեանքէն:
Միտացած եմ, կը տեսնէ՞ք մէկ ուսքս
միշտ գերեղմանիս ճամբուն մէջն է,
աչքս ցուրտ հողին տակ փակելէն ա-
ռաջ անոր կերպարանքը տեսնեմ որ
վնէ՛ւ երկու գտականերաւ վրէժը թո-
ղում իրեն:

(Շարունակելի)

